# ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 33 - 34 (16632) ՇԱԲԱԹ, 28 ԱՊՐԻԼԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

## ԱԿՏԻՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱԼՅԱՆՍԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանում անցկացվում են ՆԱՏՕ-ի օրերը: Դրա շրջանակներում, այլ միջոցառումների թվում, Բաքումիում ապրիլի 23-ին անցկացվեց «Վրաստանը եւ Սեւծովյան տարածաշրջանը նոր աշխարհաքաղաքական օրակարգում» սեմինարը:*

Հանդես գալով միջոցառմանը՝ ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Պաուլո Ալլին հայտարարեց, որ Խորհրդարանական վեհաժողովը ակտիվորեն «աջակցում է եւ կշարունակի աջակցել դաշինքին Վրաստանի ինտեգրման գործընթացին»:

Իր խոսքում, Վրաստա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿԳՈՐԾԻ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ»

*Ապրիլի 26-ին, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կենտրոնակայանում, տեղի ունեցավ կուսակցության խորհրդարանական մեծամասնության հանդիպումը քաղաքական կազմակերպության ղեկավարների հետ:*

Հանդիպմանը քննարկեցին վերջին ժամանակներում կուսակցության ներսում ստեղծված իրավիճակի, առանձին խմբավորումների միջեւ ծագած տարաձայնությունների հարցը: Հանդիպման ավարտից հետո, հատուկ հրավիրված մամլո ասուլիսում, ելույթ ունեցավ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Իր խոսքում Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ կուսակցությունում ծրագրվում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

## ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

*Վրաստանի խորհրդարանում սկսվել են Վրաստանի քաղաքացիների կողմից երկքաղաքացիությունն արգելող օրենքի վերանայման քննարկումները:*

Վերոնշյալ օրենքում ծրագրված են փոփոխություններ, որոնք խորհրդարանն ընդունելու է արագացված կարգով: Վերոնշյալ օրինանախագիծը մշակել է Վրաստանի արդարադատության նախարարությունը: Ինչպես նշեցին օրենսդիր մարմնի պատգամավորները, իրենք հույս ունեն, որ այդ փոփոխություններ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆՇԱՆԱԿՈՒՄ

## ՇԱԼՎԱ ԹԱԴՈՒՄԱՁԵՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու կարգադրությամբ, 41-ամյա Շալվա Թադումածեն նշանակվել է Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար:*

Շալվա Թադումածեն ավարտել է Նոդար Դումբաձեի անվան հումանիտար ինստիտուտը՝ իրավաբանի մասնագիտությամբ, ապա՝ Վրաստանի տեխնիկական համալսարանը, ունի տեխնիկական մագիստրոսի գիտական կոչում:

Աշխատել է Վրաստանի պաշտպանության նախարարությունում: Ապա հիմնել է մասնավոր փաստաբանական ընկերություն, զբաղվել փաստաբանությամբ: 2012-2018 թթ. Վրաստանի կառավարության խորհրդարանական քարտուղարն էր, միաժամանակ զբաղեցնում էր կառավարության գրասենյակի իրավաբանական դեպարտամենտի պետի պաշտոնը:

Նշենք, որ Մայա Ցքիտիշվիլու՝տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար նշանակվելուց հետո, մարտի 30-ից Շալվա Թադումածեն կառավարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարն էր:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 103

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

*Ապրիլի 24-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սարգսյանը, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Կարեն Կարապետյանը, Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, այլ պաշտոնյաներ Ծիծեռնակաբերդի բարձունքում հարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:*

Անմար կրակի մոտ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարեց հոգեւոր դասը, հավաքվածները գլուխ խոնարհեցին եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին սպանված 1,5 միլիոն հայերի հիշատակը:

Ապրիլի 24-ին դեռ գիշերվանից ու վաղ առավոտից մարդկանց հոսքը հուշահամալիր չէր դադարում: Հիշատակի արարողություններ կատարվեցին Հայաստանի բոլոր շրջաններում, աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներում: Բողոքի կոչ բարձրացվեց Թուրքիայի մերժողական քաղաքականության դեմ եւ ուղերձ հղվեց միջազգային հանրությանը՝ ճանաչելու 20-րդ դարասկզբի մեծագույն ոճրագործությունը՝ դրանով իսկ թույլ չտալով ցեղասպանությունների կրկնություն: Հայ Առաքելական եկեղեցու բոլոր թեմերում մատուցվեց հոգեհանգստի պատարագ:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Ապրիլի 23-ին Վրաստանում Հայաստանի դեսպանությունը Թբիլիսիի «Բելթիմոր» հյուրանոցում անցկացրեց միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին:*

Միջոցառմանը խոսքով հանդես եկավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, ով իր ելույթում մասնավորապես նշեց, որ հայ ժողովրդի արեւմտյան հատվածը, որ հազարամյակներով ապրել էր իր բնօրրանում, տեղահանվեց եւ բնաջնջվեց՝ համաձայն պետականորեն մշակված ծրագրի: Դեսպանն ընդգծեց, որ հայ ժողովուրդը եւ առաջադեմ միջազգային հանրությունը սպասում են, որ Թուրքիան իր մեջ քաջություն կգտնի առերեսվելու սեփական պատմությանը եւ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը:

Անդրադառնալով ցեղասպանությունների կանխարգելմանը՝ Ռուբեն Սադոյանը նշեց, որ հայ ժողովուրդը, վերապրե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ՍՐԲԱԴԱՍՎԱԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*2018 թվականի ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 1,5 միլիոն սրբադասված նահատակների հիշատակի օրը, Վիրահայոց թեմում տեղի ունեցան «Հիշում եմ եւ պայքարում» կարգախոսով միջոցառումներ:*

Առավոտյան, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի կողմից մատուցվեց Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակին նվիրված Սուրբ եւ Անմահ պատարագ: Այնուհետեւ, թե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ. ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻՆ ՆԱԽՈՐԴԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք թերթի նախորդ համարում, ապրիլի 12-ին Երեւանում, Հայաստանի տարբեր մարզերում սկսվեցին հանրահավաքներ՝ ի նշան երկրի Ազգային ժողովի կողմից վարչապետի պաշտոնում Սերժ Սարգսյանի թեկնածության առաջադրման: Բողոքի ցույցերը գլխավորեց Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր, «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

# ԱԿՏԻՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱԼՅԱՆՍԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն հայտարարեց, որ «այժմ ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի համագործակցությունն ամենաբարձր մակարդակի է հասել այդ համագործակցության ողջ ժամանակաշրջանում, մենք մտադիր ենք ընդլայնել այդ գործընթացը,- ասել է Ջանելիձեն:

Նշենք, որ «Վրաստանը եւ Սեւծովյան տարածաշրջանը նոր աշխարհաքաղաքական օրակարգում» միջազգային սեմինարին մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Վրաստանում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի ղեկավար Ռոզարիա Պուգլիսը:

Համաժողովի մասնակիցները քննարկեցին «երկրում բարեփոխումների ընթացքը, ՆԱՏՕ-ի եւ Վրաստանի համագործակցության հարցերը, Սեւծովյան տարածաշրջանի անվտանգությունը, քաղաքացիական հասարակության զարգացումը»: Սեմինարին մասնակցցին ՆԱՏՕ-ի անդամ երկրների եւ գործընկեր երկրների, արտասահմանյան պետությունների դեսպանությունների ներկայացուցիչներ:

ԿՈՒԲԱ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿԳՈՐԾԻ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

են նշանակալի փոփոխություններ:

- Մենք գիտակցում ենք, որ հասարակության մոտ ծագել են բնական եւ օրինական հետաքրքրություններ կառավարող կուսակցությունում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ: Մենք՝ որպես կառավարող կուսակցություն, գիտակցում ենք մեր պատասխանատվությունը երկրի եւ ժողովրդի առջեւ: Գտնում ենք, որ մեր պետականության զարգացման պայմաններում անհրաժեշտ է ամրացնել կուսակցությունն ու մեր թիմը: Նշանակալից են ներկուսակցական գործընթացներում ժողովրդավարության ներդրումը, միաժամանակ, մեզ միավորում է քաղաքական միասնական միտվածությունը ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին ուղղություններով: Նշանակալից է, որ մենք՝ որպես կառավարող ուժ, պահպանենք միասնությունը հիմնարար հարցերում: Հայտնի է, որ Բիձինա Իվանիշվիլին մեր երկրի պատմության ծանրագույն ժամանակներում ձեւավորեց կուսակցություն, որը բեկումնային դեր կատարեց երկրի զարգացման գործում: Բոլորին քաջ հայտնի է, թե մեր կուսակցության համար ինչ նշանակություն ունեցավ Բիձինա Իվանիշվիլու գործոնը: Ցանկանում եմ ասել, որ իմ ու մեր թիմի անունից Բիձինա Իվանիշվիլուն առաջարկել եմ գլխավորել կուսակցությունը, եւ ուրախ եմ, որ Բիձինա Իվանիշվիլին համաձայնեց: Նա բոլորից շատ կարող է ամրացնել քաղաքական միջուկը կուսակցության նախագահի պաշտոնում, առավել դինամիկա հաղորդել մեր հետագա զարգացման գործընթացին՝ ինչպես գործադիր, այնպես էլ՝ օրենսդիր իշխանության եւ տեղական ինքնակառավարման ոլորտում,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց.

- Մենք համոզված ենք, որ քաղխորհուրդը, ինչպես նաեւ պատվիրակները, Բիձինա Իվանիշվիլուն միաձայն կընտրեն կուսակցության նոր նախագահ, եւ, բնականաբար, կընտրվի քաղաքական խորհրդի նորացված կազմը: Համոզված եմ, որ սույն որոշումը դրական ազդեցություն կգործի մեր երկրի քաղաքական կյանքի վրա: Դա նշանակալի ազդակ կլինի մեզ համար, «Վրացական երազանք» կուսակցության յուրաքանչյուր անդամի, մեր թիմի եւ անձամբ ինձ համար՝ որպես վարչապետ,- ընդգծեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նշենք, որ Կվիրիկաշվիլին «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ էր ընտրվել 2016թ. մայիսի 14-ին անցկացված նիստում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՔԱՅԼ ԴԵՊԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՊԱԳԱ» ԾՐԱԳԻՐԸ՝ ՄԱԿ-Ի ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

***Ապրիլի 24-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, ելույթ ունենալով Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում, խոսեց Վրաստանի կառավարության նոր խաղաղ նախաձեռնության եւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի մասին:***

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, Միխեիլ Ջանելիձեն մասնակցել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում անցկացված բարձր մակարդակի հանդիպմանը, ներկայացրել Վրաստանի գործադիր իշխանության «Քայլ դեպի լավագույն ապագա» նախաձեռնության մանրամասները: Վրաստանի ԱԳ նախարարի հավաստմամբ, սույն նախաձեռնությունն ուղղված է բաժանման գծի երկայնքով բնակվող մարդկանց մերձեցմանն ու Վրաստանի բռնազավթված տարածքներում ապրող հայրենակիցների համար այն հնարավորությունների ընձեռմանը, որոնց Վրաստանն արժանացել է երկրի կյանքի տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումների եւ Եվրամիության հետ ասոցիացման գործընթացի արդյունքում:

Վրաստանի կառավարության «Քայլ դեպի լավագույն ապագա» նախաձեռնությունը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանում աջակցություն գտավ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Լատվիայի, Լիտվայի, Ռումինիայի եւ մյուս երկրների պատվիրակությունների կողմից:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

# ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ը կընդունվեն արդեն մայիսի վերջին:

Հիշեցնենք, որ ներկայումս գործող օրենսդրությամբ, եթե Վրաստանի քաղաքացին ստանում է այլ երկրի քաղաքացիություն, նա ավտոմատորեն կորցնում է Վրաստանի քաղաքացիությունը: Վերոնշյալ փոփոխությունների ընդունման դեպքում, այդ սահմանափակումը կվերանա: Այն անձինք, ովքեր, մինչեւ այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը, առնվազն մեկ տարի առաջ կորցրել են քաղաքացիությունը, կարող են վերականգնել:

Նշենք, որ երկքաղաքացիության արգելման մասին գրանցումը սահմանադրությունից հանվել է, իսկ օրգանական օրենքում իրականացվելիք փոփոխություններն ուղղված են այդ օրենսդրության համապատասխանեցմանը սահմանադրությանը:



ԿՈՒԲԱ

## ԿԱՍՏՐՈՅԻՆ ՓՈԽԱՐԻՆԵՑ ԲԵՐՆՈՒԴԵՍԸ

*Ֆիդել Կաստրոյի եղբայր Ռաուլ Կաստրոն հրաժարական է տվել Կուբայի պետական խորհրդի նախագահի պաշտոնից: Այդ պաշտոնը զբաղեցրել է Միգել Դիաս Կանել Բերնուդեսը:*

*Կուբայի 58-ամյա նոր նախագահը մասնագիտությամբ ինժեներ է: Քաղաքական կարիերան սկսել է Կուբայի երիտասարդ կոմունիստների միությունում: Հատուկ առաքելությամբ եղել է Նիկարագուայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի ժամանակ: Հայրենիք վերադառնալուց հետո, եղել է Կուբայի կրթության նախարարը, իսկ Ֆիդել Կաստրոյի մահից հետո, դարձել պետխորհրդի նախագահի տեղակալ:*

*Թեպետ Ռաուլ Կաստրոն թողել է պետական խորհրդի նախագահի պաշտոնը, բայց նա պահպանել է Կուբայի կոմկուսի ղեկավարի պաշտոնը:*

ԿՈՐԵԱ

## ԿԱՅԱՑԱՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

*Ապրիլի 27-ին սահմանամերձ Փանմունջոմում ավարտվել է Կորեայի Հանրապետության եւ ԿԺԴՀ-ի ղեկավարների միջեւ պատմական բանակցությունների առաջին մասը: Կորեայի Հանրապետության նախագահ Մուն Չժե Ինը եւ ԿԺԴՀ-ի առաջնորդ Կիմ Չեն Ընը բանակցությունների սեղանի շուրջ անցկացրել են մեկուկես ժամ:*

*Բանակցություններն սկսվելուց առաջ, երկու երկրների ղեկավարները պատրաստակամություն են հայտնել անցկացնել կառուցողական երկխոսություն՝ միտված Կորեական թերակղզում հաշտության եւ բարգավաճման հաստատմանը: Բանակցությունների արդյունքներով, ԿԺԴՀ-ի առաջնորդ Կիմ Չեն Ընը համաձայնություն է տվել ԱՄՆ-ի տեսուչների կողմից իր միջուկային փորձարանի ստուգմանը:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## C-400 ՀՐԹԻՌՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

*Ռուսաստանն սկսել է C-400 զենիթահրթիռային համակարգերի (ԶՀՀ) արտադրությունը Թուրքիայի համար: Այդ մասին հայտնել է «Ռոսօբորոնէքսպորտի» ղեկավար Ալեքսանդր Միխեեւը:*

*- Մենք ձեռնամուխ ենք եղել (Թուրքիային C-400-ի մատակարարման) պարտավորագրի կատարմանը,- ասել է նա:*

*Միխեեւը պարզաբանել է, որ խոսքն առայժմ չի վերաբերում C-400-ի մատակարարումներն սկսելուն, ներկայումս սկսված է ԶՀՀ-ի արտադրությունը:*

*Նշենք, որ անցյալ տարվա դեկտեմբերին Անկարայում Ռուսաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչները վարկային համաձայնագիր են ստորագրել C-400-ի մատակարարումների վերաբերյալ:*

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

# ԾԱԼԿԱՑԻՆԵՐԻ ԵՐԱԽՏԻՔԸ՝ ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼՈՒՆ

***Սիրելի «Վրաստան» թերթի խմբագրություն, Ծալկայի մունիցիպալիտետի ողջ, հատկապես՝ մեր շրջանի հայ բնակչության անունից գրված այս նամակում ցանկանում ենք մեր երախտիքը հայտնել Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Կախա Օքրիաշվիլուն:***

Մեր օրերում, քաղաքական գործիչներից եզակիներին է հաջողվում նվաճել ժողովրդի հարգանքն ու, առավելեւս, երախտագիտությունը: Ցավոք, խոստումները հաճախ մոռացվում են եւ բերում հիասթափության:

Բարեբախտաբար, Ծալկայի շրջանի բնակչությունն այսօր այդ խնդիրը չունի, ինչը, կարծում ենք նույնպես բարձրաձայնելու կարիք ունի, քանի որ միայն բացասականը չէ, որի մասին խոսել է հարկավոր: Մենք կրկնակի հպարտ ենք, որովհետեւ ձայների մեծամասնությունը վստահել ենք արժանի մարդու ու խոսքը գործի վերածող պարգամավորի՝ Կախա Օքրիաշվիլուն, ով հստակ գիտակցում է իր առջեւ դրված պատասխանատվությունը ժողովրդի առջեւ: Վրաստանի մյուս տարածաշրջանների նման, Ծալկայում նույնպես սոցիալական խնդիրներ կան, որոնց անլուծելիությունը հաճախ է ստիպում հուսահատվել, իսկ երիտասարդին՝ հեռանալ շրջանից: Բայց ահա վերջին ժամանակաշրջանում իրավիճակը կարծես հակառակն է ավետում: Դրական տեղաշարժերն իսկապես ներշնչում են հույս, որն օրեցօր ավելի է մեծանում ու տարածվում բնակչության շրջանում: Բատոնո Կախան միշտ մեզ հետ է, ուշադիր՝ թե' ուրախությանը եւ թե' խնդրին: Որքան հաճելի է, երբ Ամանորին ու Սուրբ Ջատկին թակում են դուռդ եւ քեզ փոխանցում պատգամավորիդ շնորհավորական բացիկն ու փոքրիկ նվերը: Եվ դա շրջանի 13 հայկական գյուղի յուրաքանչյուր բնակչին: Քեզ ոչ միայն ջերմացած ես զգում, այլ գիտակցում ես, որ ընտրյալ պատգամավորիդ ձեռքը մշտապես ժողովրդի զարկերակին է: Բատոնո Կախան արդեն իրականացրել է իր խոստումը՝ բետոնապատվել են գյուղերն իրար կապող ճանապարհները: Այժմ մեծ ակնկալիք ունենք. լուծվելու է գազիֆիկացման խնդիրը:

Իր վարքով ու պատասխանատու վերաբերմունքով, Կախա Օքրիաշվիլին խրախուսում է նաեւ տեղի բարերարներին, որոնց նյութական աջակցությամբ շրջանում դպրոցներ են վերանորոգվում, կառուցվում բուժկետեր, մարզադահլիճներ, իսկ դա իր զգալի աշխուժությունն է բերում շրջան՝ կանխելով ամենավտանգավորը՝ երիտասարդների արտահոսքը:

Մենք ուրախ ենք, բատոնո Կախա, որ ընտրողի մեր ձայնը վստահել ենք հենց Քեզ նման պատասխանատու եւ բարեխիղճ պատգամավորի ու, նախեւառաջ, մարդու:

***ԳՈՉԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***

***Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահի տեղակալ***

# Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՍՈՎՈՐԻ'Ր ԵՎ ԱՇԽԱՏԻ'Ր» ՆԱԽԱԳԻԾԸ

***Թբիլիսիի քաղաքապետարանը, արհեստակցական քոլեջների հետ համագործակցությամբ, սկսում է մասնագիտական վերապատրաստման նախագիծը:***

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, սույն նախագիծն ուղղված է նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործազրկության մակարդակի նվազեցմանը:

- Մենք ցանկացողներին կվերապատրաստենք 15 մասնագիտություններով՝ զբոսաշրջության եւ շինարարության ոլորտներում: Տարիքային սահմանափակում չի լինի. ցանկացած 18 տարեկանից բարձր անձ կկարողանա ներգրավվել այդ նախագծում: Գլխավորն այն է, որ նա ունենա թբիլիսյան գրանցում,- հայտարարեց քաղաքապետը եւ հավելեց, որ ընտրությանն առաջնահերթությունը կտրվի սոցիալապես անպաշտպան քաղաքացիներին, վետերաններին եւ նրանց ընտանիքի անդամներին, բռնագաղթվածներին, որբերին եւ բազմազավակ ընտանիքի անդամներին:

- Գրանցումը կշարունակվի մինչեւ մայիսի 4-ը: Նախագծի հետ կապված բոլոր ծախսերը ստանձնում է քաղաքապետարանը: Մենք ցանկանում ենք օգնել մարդկանց, որպեսզի աշխատանք ունենան: Էկոնոմիկան զարգանում է, շուկան աճում, եւ պատվիրատուների մոտ պահանջարկը մեծանում: Մեզ անհրաժեշտ են որակավորված արհեստավարժ կադրեր: Մասնակցե՛ք այս նախագծին, այն ձեզ կնախապատրաստի ապագայի համար,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## «ՍԻԹԻ ՊԱՐԿԻՆ» ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԹԲԻԼԻՍԻԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

 თბილისის სატრანსპორტო კომპანია
TBILISI TRANSPORT COMPANY

***Հետայսու Թբիլիսիում կառանումների համար, «Սիթի պարկի» փոխարեն, պատասխանատվությունը կրելու է Թբիլիսիի տրանսպորտային ընկերությունը:***

Ինչպես նշեց այդ ընկերության ղեկավար Մամուկա Կոբախիձեն, «Սիթի պարկի» 102 աշխատակիցները ցանկություն են հայտնել աշխատանքը շարունակել Թբիլիսիի տրանսպորտային ընկերությունում: Ընկերությանն առընթեր կգործեն նաեւ թեժ գիծն ու համացանցը, ըստ որոնց, ցանկացողը կկարողանա ստանալ տեղեկատվություն: Մամուկա Կոբախիձեի խոսքով, կարգը խախտողների համար տուգանքի սակագինը մնում է նույնը:

Հիշեցնենք, որ «Սիթի պարկի» հետ պայմանագրի չեղարկման մասին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց ընթացիկ տարվա մարտի 13-ին: Այդ որոշումը նա հիմնավորեց վերոնշյալ ընկերության կողմից ստանդարտ պարտավորությունների կատարման գործում թույլ տրված թերացումներով:

ՔՐԵԱԿԱՆ

## ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 18 ԿԳ ԹՄՐԱՆՅՈՒԹ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, վերջին չորս ամիսների ընթացքում առգրավվել է ավելի քան 18 կգ թմրանյութ:***

Ինչպես նշվեց հատուկ հրավիրված մամուլի ասուլիսում, գերատեսչության առաջնահերթություններից մեկը թմրանյութերի ձեռքբերման, պահման եւ տարածման դեմ պայքարի ակտիվացումն ու թմրանյութերից առաջացած վնասի առավելագույն նվազեցումն է: Մամուլի ասուլիսում նշվեց նաեւ, որ ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչեւ ապրիլի 24-ը առգրավվել է ավելի քան 18 կգ թմրանյութ, պատասխանատվության է ենթարկվել 754 անձ, որից 394-ը ձերբակալվել է թմրանյութերի ապօրինի ձեռքբերման եւ առանձնակի մեծ ծավալներով իրացման մեղադրանքներով:



## ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԸ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Վրաստանի խորհրդարանի առջեւ մայիսի 2-ին հանդես կգա ամենամյա հերթական հաշվետվությամբ:*

*Ինչպես նշել է կառավարության աշխատակազմի մամուլի ծառայությունը, խորհրդարանի նախագահի ելույթին ներկա կլինեն Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր իշխանության ներկայացուցիչներ:*

## ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԸ ԿԱՅՑԵԼԻ ՎՐԱՍՏԱՆ

*ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի գործերով օգնական Ուես Միթչելը հաջորդ շաբաթ կայցելի Վրաստան ու Ուկրաինա:*

*Բրյուսելում ՆԱՏՕ-ի նախարարական հանդիպումից հետո, որը կկայանա ապրիլի 27-ին, Միթչելը կայցելի Վրաստան, ուղեւորության ստույգ ամսաթիվը չի նշված: Սպասվում է, որ Թբիլիսիում նա հանդես կգա «Վրաստանի հյուսիսատլանտյան ձգտումների» աջակցությամբ:*

## ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ ԱՌԱՆՑ ՇՔԵՐԹԻ

*Անկախության հռչակման 100-րդ տարելիցի օրը Վրաստանում զինվորական շքերթ չի անցկացվի:*

*Ինչպես հայտարարեցին Վրաստանի ՊՆ մամուլի կենտրոնից, նախորդ տարիների օրինակով, այս տարի մայիսի 26-ին զինվորական շքերթ չի անցկացվի: «Կանցկացվեն ժողովրդական միջոցառումներ, նորակոչիկների զինվորական երդման արարողություն, կցուցադրվեն «Դելտա» ընկերության ռազմական տեխնիկան»,- ասված է նախարարության հաղորդագրության մեջ:*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ᲨᲔᲛᲝᲡᲐᲕᲚᲔᲗᲘᲡ ᲡᲐᲛᲘᲜᲘᲡᲢᲠᲝ

## ԱՎԱՐՏՎԵՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության նախաձեռնությամբ եւ երկրի կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ, ապրիլի 24-ին հանրային դպրոցներում ավարտական դասարանների աշակերտների համար ավարտվեց հանրակրթական «Վճարենք հարկերը լավագույն ապագայի համար» նախագծի առաջին փուլը:***

Նախագծին մասնակցեց Թբիլիսիի հանրային դպրոցների շուրջ 1400 աշակերտ: Հարկերի վճարման եւ այդ ոլորտի իմացության ձեւակերպման նպատակով, բյուջեի բաշխման սկզբունքների եւ պետության զարգացման գործում հարկերի դերի մասին աշակերտներին տրվեց սպառիչ տեղեկատվություն:

Հանրակրթական նախագիծը ներառում էր տեղեկատվական բնույթի շնորհանդեսներ եւ տարբեր միջոցառումներ, ինչը աշակերտներին հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ ընկալել հարկային քաղաքականության էությունը: Մասնավորապես, ինչ տեսակի հարկեր գոյություն ունեն, ինչու ենք պարտավոր վճարել հարկերը, ինչպես է բաշխվում մեր կողմից տրված հարկերի գումարը, ինչ հետեւանքների է հանգեցնում հարկեր չվճարելը: Այդ ոլորտում, աշակերտների իմացության մակարդակի բարձրացման նպատակով, ձեւավորված թեստերի վերլուծությունը ցույց տվեց, որ անցկացված վարժանքների արդյունքում, հարկային ոլորտում աշակերտների գիտելիքների մակարդակը նշանակալի ավելացել է: Վերոնշյալ նախագծի շրջանակներում, անցկացվել է 59 վարժանք: Հանրակրթական վարժանքներ ծրագրվում են նաեւ բուհերում:

*ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

## ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

***Ապրիլի 24-25-ը Թբիլիսիում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աջակցությամբ, անցկացվեցին հարկային վարչակազմերի ներքին եվրոպական կազմակերպության (IOTA) հարկային վարչակազմերի աշխատանքային խմբերի հանդիպումները:***

Քննարկման գլխավոր թեման «Հարկատուների սպասարկման նորագույն հնարավորությունները եւ ապագա միտումները» էր: Հանդիպումներին մասնակցելու համար, Վրաստան էր ժամանել Եվրոպայի տարբեր երկրներից հարկային վարչակազմերի շուրջ 50 ներկայացուցիչ: Միջոցառման շրջանակներում, տեղի ունեցավ փորձի փոխանակում, այդ ոլորտում ձեռքբերումների, մարտահրավերների եւ առաջիկա ծրագրերի քննարկում: Հանդիպման մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց եկամուտների ծառայության միջազգային հարաբերությունների դեպարտամենտի պետ Սամսոն Ուրիդիան: Իր խոսքում, նա կանգ առավ հարկային վարչակազմերի առջեւ սպասարկման ոլորտում առկա մարտահրավերների եւ այդ տեսանկյունից IOTA-այի առանձնակի դերի հարցին:

Նշենք, որ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը IOTA-այի անդամ է դարձել 2004 թվականին, իսկ 2017 թվականին Վրաստանն ընտրվեց կազմակերպության գործադիր խորհրդի անդամ:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 103

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լով ցեղասպանությունն ու բնաջնջման վտանգը, այսօր նոր ցեղասպանությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման պայքարում դարձել է առաջամարտիկ:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեցին կարճամետրաժ փաստավավերագրական ֆիլմեր:

Այնուհետեւ, ներկաներն ունկնդրեցին Կոմիտասի անվան ազգային լարային քառյակի կատարումները:

Միջոցառման շրջանակներում, տեղի ունեցավ նաեւ Վրաստանում ՀՀ դեսպանության կողմից հրատարակված «Փաստեր՝ Հայոց ցեղասպանության մասին» վրացերեն գրքույկի շնորհանդեսը:

# ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ՍՐԲԱԴԱՍՎԱԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մակալ առաջնորդի օրվա խորհրդի մասին հավուր պատշաճի խոսքից հետո, հավաքվածները մոտեցան եկեղեցու բակում կանգնեցված Ցեղասպանության հիշատակի խաչքարին, որտեղ Թեմական առաջնորդի նախագահությամբ կատարվեց բարեխոսական կարգ, ոգեկոչվեց Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակը:

Ներկաները ծաղիկներ խոնարհեցին Հիշատակի խաչքարի պատվանդանին:

Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին նվիրված հոգեւոր եւ աշխարհիկ միջոցառումներ անցկացվեցին Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցիխեում, Ծալկայում,

Բաթումիում, Վրաստանի հայաբնակ մյուս բնակավայրերում:

*Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին «Բելթիմոր» հյուրանոցում եւ Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Դավիթ Ճիճինաձեն, Հենզել Մկոյանը, Ռուսլան Պողոսյանը, Թբիլիսիի սակրեբուլոյի պատգամավոր Իլիա Ջիշկարիանին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցի նախարարության փորձագետ Ալեքսանդր Մովսիսյանը, հայ-վրացական բիզնես-միության նախագահ Սամվել Աղեկյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, «Վրացահայերի միության» փոխնախագահ Մարի Առաքելովան, «Վրաստանի հայ համայնք» կազմակերպության նախագահ Սամվել Մկրտչյանը, կրթության եւ մշակույթի գործիչներ:*

*Միջոցառմանը ներկա էին նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:*

# ՆԱԽԱԴԵՊԸ ՉՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՈՏ

***Ապրիլի 24-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում մատուցված Սուրբ եւ Անմահ պատարագի ավարտից հետո, վիրահայերով ավտոբուսների շարասյունն ուղղվեց դեպի Թբիլիսիում Թուրքիայի դեսպանության հարակից փոքրիկ հրապարակ, որտեղ տեղի ունեցավ բողոքի խաղաղ հանրահավաքը: Նշենք, որ Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից դեսպանատան մոտ յուրաքանչյուր տարի արտոնվող հանրահավաքը տեղի է ունենում 2005 թվականից:***

Այս տարի ցույցը արձանագրվեց համաշխարհային դիվանագիտության պատմության մեջ նախադեպը չունեցող իրադարձությամբ:

Ցույցի հենց սկզբում, Թուրքիայի դեսպանատան մուտքից, անսպասելիորեն, դուրս եկան մի քանի տասնյակ մարդիկ, պետական դրոշներով ու պաստառներով: Հակակոչերով եւ աղաղակելով՝ նրանք փորձում էին ընդհատել թբիլիսահայերի ցույցը: Հնարավոր բախումը արագորեն կանխվեց վրաց ոստիկանության ստորաբաժանումների շնորհիվ, ովքեր տեղում մոբիլիզացվել էին օրենքով արտոնված ցույցի անվտանգությունը ապահովելու համար: Հակացուցարարներին ոստիկանությունը վերադարձրեց դեսպանության տարածք:

Թուրքիայի դեսպանատան առջեւ անցկացված բողոքի ցույցի մասնակիցները՝ հայերեն, վրացերեն, անգլերեն եւ թուրքերեն, արտահայտեցին իրենց բողոքը 1915-1923 թթ. հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության ժխտման քաղաքականության դեմ:

Հանրահավաքի մասնակիցները իրենց երախտիքը հայտնեցին Վրաստանի ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայության աշխատակիցներին՝ հարգալից վերաբերմունքի, ըմբռնման եւ արհեստավարժության համար:

Հանրահավաքն անցկացվեց «Վրաստանի հայ համայնք» կազմակերպության նախաձեռնությամբ եւ Վիրահայոց թեմի աջակցությամբ:

*Լուսանկարները՝*
*ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ*

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ ԱՄԵՆԱԱՆՊԱՇՏՊԱՆԸ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԵՆ

## «ԿԱՍՊԵՐՍԿՈՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ». «ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՐԵՔ ԿԻԲԵՐՍՊԱՌՆԱԼԻՔԻՑ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ»

***Վրաստանում համացանցի համընդհանուր տարածումը եւ երեխաների կողմից համացանցի մատչելիության հնարավորությունների աճը նրանց համար բացել է հաղորդակցման ու տեղեկատվության ստացման անսահմանափակ հնարավորություն: Սակայն այդ հնարավորությունները ներառում են բազում կիբերսպառնալիքներ երեխաների համար, եւ դրանից պաշտպանվելու համար անհրաժեշտ ուշադրությունից զերծ է ոչ միայն Վրաստանը, այլեւ ողջ աշխարհը:***

«Կասպերսկու լաբորատորիայի» ուսումնասիրությունների համաձայն, կիբերսպառնալիքից առավել անպաշտպան են 13-15 տարեկան երեխաները: Այդ ժամանակահատվածում նրանց ներթափանցումը համացանց առավել ակտիվ է ու բարդ: Հենց այդ ժամանակահատվածում էլ թուլանում է նրանց նկատմամբ ծնողների վերահսկողությունը:

Նման դեպքերի վրա կարող են ազդել միաժամանակ մի քանի գործոններ: Նախ, կտրուկ աճում է 13-15 տարեկան երեխաների թիվը, ովքեր իրենց ազատ ժամանակի նշանակալից մասն անցկացնում են համացանցում: Հենց այդ տարիքում ծնողները դեռահասների կայք-էջերում հայտնաբերում են անհանգստացնող տեսանյութեր: Հենց 13-15 տարեկան անչափահասներն են հանդիպում ընկերների եւ համադասարանցիների հետ, ովքեր հրապարակում են դաժան բնույթի նյութեր, նրանք բոլորից շատ են տարված բազմակողմանի օնլայն խաղերով եւ առավել հաճախ են ընդհարվում կիբերբուլլինգների հետ: (անգ.bullying-վախեցնել):

Բացի այդ, ցանկացած տարիքի աշակերտներ, ներկա դրությամբ, գրեթե անպաշտպան են ինտերնետ սպառնալիքներից: Օրինակ, գրեթե յուրաքանչյուր հինգերորդ հարցման ենթարկվածը սոցցանցերում ստացել է հրավեր տարիքով անծանոթից: Հարցման ենթարկվածների կեսից մի փոքր ավելին պատահաբար հայտնվել է տարեցների համար նախատեսված կայքերում: Գրեթե յուրաքանչյուր երրորդն ընդհարվել է կիբերբուլլինգի հետ կամ տեղեկացել այդ մասին, եւ դա այն դեպքում, երբ նրանց ծնողների կեսից ավելին նման փաստի հետ չեն առնչվել:

Ինչ վերաբերում է սոցցանցում երեխաների պաշտպանությանը, ապա, ներկա դրությամբ, ծնողի վերահսկողության գործառույթը տեղադրել է ընդամենը 36 տոկոսը: Հիմնականում այն միացած է համակարգչին եւ նոութբուքերին: Բջջային սարքերը, որոնցով երեխաներն զբաղվում են իրենց կյանքի նշանակալից ժամանակահատվածում, քիչ են պաշտպանված: Օրինակ, առանց սմարթֆոնի իրենց գոյությունը չեն պատկերացնում հարցման ենթարկված երեխաների 69 տոկոսը:

Երեխաների օնլայն կենսակերպի վրա ոչ պակաս ազդեցություն է գործում ծնողների վերաբերմունքը նրանց նկատմամբ: Հարցման ենթարկվածների ավագների գրեթե մեկ երրորդը (29 տոկոսը) խոստովանել է, որ այդ առումով իրենց ընտանիքներում լինում են դիմակայություններ: Որպես օրենք՝ տարաձայնություններ ծագում են այն ժամանակամիջոցում, երբ երեխաներն անցկացնում են սոցցանցերում (83 տոկոսը):

- Ներկայիս իրավիճակը որոշակիորեն անհանգստացնող է: Երեխաները պաշտպանված չեն կիբերսպառնալիքներից, որոնք օրեցօր ավելանում են: Միաժամանակ, համացանցում կրկին անտարբերության է մատնված նրանց անվտանգությունը: Տվյալ պարագայում, խոսքը ոչ թե գործողությունների սահմանափակման, այլ երեխաների եւ ծնողների միջեւ հարաբերությունների մասին է: Կիբերբուլլինգի սպառնալիքի հետ ընդհարված երեխաների եւ այդ մասին տեղեկացած ծնողների թվի միջեւ առկա տարբերությունը մատնանշում է, որ հաճախ վստահության մասին խոսակցություններն անգամ ավելորդ են: Եթե ընտանիքում կա փոխըմբռնում, ապա պաշտպանության մասնագիտացված մեթոդները, ինչպիսիք են ծնողների կողմից վերահսկողության սահմանումը կամ սոցիալական ցանցերի պարամետրերի կարգավորումը, երեխաների շրջանում բացասական արձագանք չեն առաջացնում: Նման պարագայում այն ընկալվում է որպես հոգատարություն եւ ոչ թե միջամտություն անձնական կյանքին, ինչը թույլ է տալիս կանխել բազում վտանգավոր իրավիճակներ,- պարզաբանել է «Կասպերսկու լաբորատորիայի» երեխաների անվտանգության ոլորտի փորձագետ Մայա Նամեստնիկովան:

ՄԱՅԱ ՆԱՄԵՍՏՆԻԿՈՎԱ

Համացանցում երեխաների պաշտպանության համար «Կասպերսկու լաբորատորիան» մշակել է Kaspersky Safe Kids-ը: Դա թույլ է տալիս ծնողներին պարզել, թե ինչով են երեխաները զբաղված սոցցանցում եւ որքան ժամանակ են անցկացնում այնտեղ: Բացի այդ, գեոլոկացիայի գործառույթի օգնությամբ, հնարավորություն է տրվում ստանալ հաղորդագրություն երեխաների սմարտֆոնների զանգերի եւ SMS-ների վերաբերյալ եւ պարզել նրանց գտնվելու վայրը:

*ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Վրաստանում «Կասպերսկու լաբորատորիայի» ներկայացուցիչ*